

Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

ԱՐՁԱԳԱՆԻ ԵՐՐՈՊԱՅԻ ԼՈՐՄԱԹՐՈՒԹԵԱՆ.

Ա. Տաթ. ԹԻՎ. 2. Հրատարակւած իւր ամիսը եւկաւ անգամ, առեկողից Բոսնի Ժողովուրդը: Թաթիկ. Արզայ Պետրոսեան, 22, rue de l'Europe, 1929. Արտոնագրեր 2.
— Պոլս, — Եգիպտոս, Արզայ Պետրոսեան Եգիպտոս: —

ԲԱՆԵՆՈՐԾ ՍՏՃԻՓԻԼՆ.

Այս յօդուածը սկսելն առաջ ներում կը խնդրենք հասարակութիւնէն և ձեռնարկին անձնական խնդիրն մը կը զբաղենք: Հասարակ կրնայ ըլլալ թէ՛ կամուսնան չենք տեսներ այսպիսի գոտի ուղիստութիւն մը, որ կրնար ուրիշ խնդիրն մը արտել և զուցէ աւելի օգտուար բան մը տարադրել, բայց զբաղելու մը օրտուրը և իրաւունքը իր մասկան արդիւնքէն ընտրելի են, կամ ինչպէս կ'ըսէ զերմանայի փիլիսոփայ մը՝ « Բարոյականը ազգանգէն աւելի կ'արժէ »: Անազգի մարդերու խումբ մը մեր իրաւունքը ոտի տակ անհեղինակ ևս, հիմա սկսել է մեր պատիւը արտաւերս ուղիստել և հետեւապէս զմեզ ոտիպել որ շարունակենք մեր սկսած կորը.....:

Սովորութիւն ունենք, երբ կը տեսնենք օգիտութիւնը կամ իր թուրը գեղեցիկութիւնը, որ անձեղի պէս կը զարգարտի ուրիշ փետարտ, նրա զարծեալ և, փայլեան մը ծարսելն հոգ, հետեւալ իրմէ զգուշալ: Սովորութիւն ունենք նաև, երբ կը նշմարենք կրօնամոլութիւնը և կայր ևսանդը որ իր հետեւութիւնն է, խորիւ մարդկային միտքի զարտաւարութեան վրայ, տրամիլ ևս և սրտարկի փիլիսոփայութեան գիտել ապահել: Սովորութիւն ունենք ի վերջէ ազգական ծննամութիւնը արհամարհել կարծիքներու քանթէ մարդերու վրայ յարձակիլ, զէնքին քանթէ պիտուրին զէմ դեմ, եթէ քանդադատութիւնը պիտ զնկու: Բայց երբ Վատութիւնը իր անհեղինակութիւն, մեր առջև կ'երևէ և իր մանաւորութիւնը զէպ ի մեզ կը մտնի, անհնարին է որ կոնք չ'աւանտը և զայրոյթով իր հակառակ չ'ընենք: Վատութիւնը մեր վրայ անհեղինակի ազդում մ'ըրած է միշտ, և չենք կրնար զայն մեր բարեկամութիւնը երբ կը պիտենք իր ձեարը նսն անձամբ մը քովը թող թէ մեր պատուը վրայ:

Հայ մտածիլի առարկէն ինչեկէ ետք՝ շատ անգամ իրեն հանդիպեցանք, շատ անգամ զինքը հարսնեցինք, շատ անգամ իր յարձակումը մեր սիրտը և միտքը վրդովեց, շատ անգամ իր ծոռաւոր քանդը և մազկէները զմեզ պաշտպանին, բայց միշտ կ'ոխէն և անք յաղթական իտեւ և իրերկրութիւնն առջև առարկին սիրտը: Վատութիւնը յաւատարմութիւն միմալ և իր անգործութիւն

գէնքով մեզ յաղթել, Ստութիւնէն և Զարգարտութիւնէն օգնութիւն կը խնդրէ, կ'ընդունի, կը քաջալերուի, զէպ ի մեզ կուգայ և անա վերստին կը հանգրայնէ իրեն այսօր Մատիւս անուն թերթին մէջ, որ ստութեան և զրոյստութեան որը մ'է ի վաղուստ անտի: Բնկրկիլ՝ հշմարտութեան պատիւը մտնայ և մեր մարդու տրմա-հատարութիւնը զոնէլ է:

Վատութիւնը այս անգամ կը յարձակի մեր վրայ Պարոն Թորոսի մը ձայնաւով, իր վաշտը կը բող-կանայ զանհիկնելէ որք նայ ձեղութիւններու ձեին ներքին փորձ ու գաս առած են: Այս Պարոն Թորոսը Հայ մ'է, բայց իր անունը անկերն կը յայտնէ թէ ինչ տեսակ նայ: Թորոսի զգուշութիւն և փորք ֆէն մը կը ծածկէ իր կողմ (1) զրոյստ ուր կը բազմի « խայտառակութիւն »: Իր մոլորի գէնքը տակաւին չ'է փոխաւ, բայց իր շարժերու քովը Զարգարտութիւնը կը բեկ-րեկի, աչքերուն մէջ Մտութիւնը կը խորտի և Ստութիւնը իր գոյնը արտածէր է այստեան վրայ: Անորին մէջ, իրքն գէնք, կը զանուր միշտ անուրը որ « եմ չ'այրէր, կը մտնէ » կ'ըսեն Երպիտը:

Վատութիւնն այս կրնարնի պատկերը Իսթիքի Կարապետի մը ճակատը համբարելով և Մատիւսին էրկը իրեն պատուածքուն ընտրելով, հրատարակի իրեն կապաւորութիւն: Լեզուն կը բանայ և քանդ չորս ստութիւն իրարու հսկէ կը հասն գետնի վրայ, կը սպրդին, կը զրոյսն և.... կը զանան իր քով: Եւր կը շարժէ և անա սե սե զրոյստութիւններ օղի մէջ կը ծաւային, կ'երեն, կ'էլեն, պտոյտ կ'տանուն և, կ'երթան իր « խայտառակ » ճակատը կը զարգային: Մատիւսին փոքր կատարեալ է, և Վատութիւնը իր մտքը և քանի մը անկի նոն ձգելով կը մեկնի, կը փութայ և ամիրայի մը Նոր անտը կը նստի ու երեւակայական յաղթութիւնով մը կը փոխաւորուի....:

Թողունք զինքը այս « խայտառակ » վիճակին մէջ և չենենք իր բեկի: Թափափուրը որպէս զի բարի հատարակութիւնը անկէ զգուշանայ:

(1) Fouine,

Ա. ՄՏՈՒԹԻՒՆ : Պարոն Թորոսը, Մախիմ մէջ մըտնելու ատեն, կ'սկսի մեր ընտանիքը, մանկութիւնը, վարքը յիշել, նախատել և ըսել թէ Խղմիրի վարժատունէն ելնելով « բարերարներու ձեռնառնութեամբ Բարիդ կրթութեան զրկուած ենք » : Պարոն Թորոսը կ'ըսէ զայս անպատկառ, բայց մարդու մ'անուն չտար, փաստ մը առաջ չբերէր և անկարելի իսկ է որ առաջ բերէ, վասն զի Խղմիրի բոլոր հասարակութիւնը զիտէ թէ մեր ազատ կամքով և ստակով հայրենիքէն ելանք ու Եւրոպա ուղղեցանք : Վկայի մը կարօտութիւն չ'ունինք, սակայն հաւաստի ենք որ դասընկերք կը յիշեն տակաւին թէ ինչ գիտաւորութիւն և փափագ ունէինք այն մեր սղատանկան հասակի մէջ : Պարոն Թորոսը կը զրպարտէ ուրեմն վատօրէն, երբ մեր որոշումը և երիտասարդի կամքը ուրիշ մարդերու և ձեռնառնութեան հետեանք կը քարոզէ : Եթէ Վատութիւնը Պարոն Թորոս և Պարոն Թորոսը վատութիւն չ'ընշանակէր, կը հրախրէինք զինքը որ մեր « բարերարներուն » անունը հրատարակէ : Ո՛հայն հրաւէր, վատութիւնը կը մրտէ այլ չլուսաւորէր հասարակութեան ծովքը :

Բ. ՄՏՈՒԹԻՒՆ : Պարոն Թորոսը կը յանդգնի աւելցնելու թէ՛ այս մտածին քաղաքները « երկու տարի մեր կրթութիւնը » խնամելէն ետեւ « իրենց պաշտպանութիւնը մեր վրայէն կը վերցնեն » : Խնչպէս կարելի է պաշտպանութիւն մը վերցնել երբ պաշտպան չկայ . ինչպէս կարելի է մեր կրթութեան ծախքը հոգալ երբ Խղմիրի Մհարոսկան վարժարանի մէջ կատարուէր է մեր կրթութիւնը..... Մի հարցընէր զայս, ժեպտիթութեան մէջ ինչո՞ղ տրամաբանութիւնը կը մոռնայ : Պարոն Թորոսը հոս ալ մարդու մ'անուն չյիշէր, հոս ալ որոշ բառ մը չգործածէր որ իր ըսածը զոնէ ճշմարտութեան երեւոյթ մը ունենայ : Ուրեմն Պարոն Թորոսը կ'ուզէ զրպարտել և կը զրպարտէ իսկ երկրորդ անգամ :

Գ. ՄՏՈՒԹԻՒՆ : Պարոն Թորոսը կ'երեւակայէ իր դուժ զլիսի մէջ թէ՛ այս երկու տարիէն ետեւ Պարոն Լապրուսը զմեզ « լքեալ » տեսնելով կ'առնու և « դաւիլն պէս կը խնամէ » : Անհեթեթ և « խայտառակ » երեւակայութիւն որ երկու շաբաթ երկու տարիի կը փոխէ : Կը հաստատենք որ Բարիդ հասնելէն երկու շաբաթ ետքը Պարոն Լապրուսը ճանչցանք, և ոչ միայն « լքեալ » չ'էինք այն ատեն այլ և մեր ազգականներէն մէկը Նուպար Եփէնտին (այսօր Նուպար Պէյ) մայրաքաղաքս կը գտնուէր բարձր պաշտօնով : Ներելի է մեզ կարծի որ ԼԹէ իրեն զիմելու խոնարհէինք և մեր կարօտութիւնը յայնմէնք վայրկեան մը չ'էր զեղներ մեզ օգնելու, իր ազգականութեան համար չ'է նէ, զոնէ մեզմէ առած քանի մը դասերուն համար : Նուպար Պէյին ջնարհի է որ մեր դասընկերներէն մէկը Եգիպտական վարժատունը մտաւ այն ժամանակ, և հոն իր

ուսումը աւարտեց : Պարոն Թորոսը կը զրպարտէ ուրեմն յանդիւրաւ երբ « լքեալ » ազգայինի վերաբերուն կը նշտէ մեր վրայ իր կեղտոտ մատերով : Աղքատութեան մէջ գտնուէր ենք, բայց ոչ նուաստութեան. կենեքք մեզի համար այնքան սիրելի չ'է որ մահէն առաջ նուաստութիւնը ընտրենք..... :

Դ. ՄՏՈՒԹԻՒՆ : Պարոն Թորոսը ամեն ամօթ կը մոռնայ ինչ ատեն Սէնդ Պարպի տեսուչին անունը իր վատշուէր բերանը կ'առնու և այս տարիքի տնձին ու մեր մէջ եղած յարաբերութիւնը կ'ուզէ հրատարակել : Կը հաստատենք թէ երբեք Սէնդ Պարպի մէջ չ'մտանք իբրեւ աշկերտ և երբեք Պարոն Լապրուսը այսպիսի զիտաւորութիւն մը չ'ունեցաւ մեզի համար : Պարոն Լապրուստ օր մը, Պ. Գ. Տատեանին սննեակը տեսնելով զմեզ ու մեր լեզուագիտութիւնը և ուսումնասիրութիւնը նշմարելով՝ հաճեցաւ ձեռն ալաշտօն մը տալ մեզ վարժատունէն դուրս (1) : Արդարեւ այս մեծ բարերարութիւն մ'էր և ամեն զիտութիւն կուտար ուսումներու զբաղիլ Սօրպօնի, Բօլէժ տը Պրանսի, Բօնսիւրվաթուար անդ Ար է Մէթիէի մէջ, բայց չ'ենք ներքի որ վատութիւնը անոր ծուռ մեկնութիւն և չարիէ դուրս տարածութիւն տայ : Պարոն Թորոսը կը զրպարտէ ուրեմն, չորրորդ անգամ ստելով կը զրպարտէ իր յօդ ուսմին մէջ :

Ե. ՄՏՈՒԹԻՒՆ : Այսքանը չ'ըսէր Պարոն Թորոսին և կը յանդգնի մեր քաղաքական կարծիքները խանգարել ու հաստատել թէ ֆօլիսիլյօն ըստած զրոնեան պաշտպան կղանք 1848 թուականին : Այս յանդգնութիւնը իր ապշութիւնը կը յայտնէ և ոչ ուրիշ բան, վասն զի ֆօլիսիլյօն մեզմէ անհաշա թշնամի չ'է ունեցեր, և ամեն ծանօթ կրնայ վկայել որ Քանձի աշակերտ մը Քապէին սին զրոնութիւնը չ'կրնար ընդունիլ երբեք : Պարոն Թորոսը կը զրպարտէ ուրեմն և ինչ ըսիլ չ'զիտէր երբ զմեզ ֆօլիսիլյօններու կորցը կը դասէ Պօլսի հայերուն առջև :

Զ. ՄՏՈՒԹԻՒՆ : Պարոն Թորոսը այնքան կը մոլեգնի որ զմեզ կը հրատարակէ իբրեւ « բարոզիչ Սէնդ Պարպի աշկերտներուն » և իբրեւ մարմնիչ անոնց ծարմ միտքերու : Քիչ մը վերը ըսինք և հոս նորէն կը հաստատենք թէ՛ այս վարժարանին մէջ ոչ բնակէր և ոչ աշկերտներու հետ խառնուէր ենք բնաւ : Ուրեմն Պարոն Թորոսը վեցերորդ անգամ կը զրպարտէ :

Է. ՄՏՈՒԹԻՒՆ : Պարոն Թորոսը Պօլսեյի հայերուն կ'ուզէ կլկեցնել թէ՛ Սէնթ Պարպի աշկերտներու ծնողքը բողոք ըրած են մեզի դէմ, թէ՛ Պարպիսներու ընկերու-

(1) Պ. Դ. Պալթաղարեանը մեզ բարեկամութիւն ըրած էր, Խղմիրէն մեկնելու ժամանակ, փոքր նամակ մը տալու Պ. Լապրուսին համար :

արեւելեան գերութեան մշտնջենական փարատեց, մեր սիրտը բարբոթեց հրաբուխ սաստկութեամբ, անհուն աշխոյժ ալ տուաւ մեզ և զրեթէ աւիամայ ասպարէզի մէջ նետեց : Այս, Լուի Ֆիլիպին դէմ ապստամբողներու հետ էինք, այս ըրինք ազատութեան համար ինչ որ ամեն մարդու պարտքն է ընել և զէն ի ձեռն թիւյլ ըրի մտնելու պատիւը ունեցանք, բայց երբեք, բնաւ երբեք յետագայ բաղաքական կռիւներու մասն չ'ունինք : Ընդ հակառակն մեր համոզումն էր որ նորէն ապստամբիլ՝ ազատութիւնը վտանգի մէջ դնել էր. դէպքերը յայտնեցին որ իրաւունք ունէինք..... : Տրտմալի սիրտով և արտասուալի աչերով հանգիստաւ գտնուեցանք սոսկալի մարտերու զորս հայ թորոսներու պէս մարդիկ զրգոք էին նորածին ազատութիւնը խեղդելու համար : Կարելի է թէ, օր մը, այս դէպքերու պատմութիւնը զրեթէ և այն ատեն Պօլսի Հայերը կրնան համոզուիլ որ Հայկաջ ճըմարիտ թող մը ազատութեան սէրը վատութեամբ ի գործ չ'դնէր, բայց հիմակընէ կը համարձակինք ըսելու և հաստատելու որ ոչ Քալանկաքի և ոչ ապստամբներու կողմը բռնելու կամք ունէինք, աւելի անկեղծօրէն ըսենք. Նոյն հարկ ըլլար այս երկու կողմին մէջ ընտրել՝ Քալանկաքին բանձէ ապստամբներու դրօշին ներքեւ դիմելու միտում կ'զգայինք..... : Հոս ալ ուրեմն Պարոն Թորոսը կը զրպարտէ և իր սեւ սրտին նախանձը կը յայտնէ :

ԺԳ ՍՏՈՒԹԻՒՆ : Պարոն Թորոսը իր ձեռքով զրօշակիր կ'ընէ զմեզ 1849, յունիսի վերջերը « ստորին կարգի ժողովրդեան մէկ մասին » : Պարոն Թորոսը ինչպէս զրպարտելը չ'զիտէր : Հռոմայի դէմ ապստամբութիւն ժամանակը՝ բազմաթիւ ուսանողք և ոչ « ստորին կարգի ժողովուրդ » ինչպէս կը բարբառնէ մեր անամօթ թշնամին, Սահմանադիր Ժողովին աղերսագիր մը տալու որոշում ըրին : Այս աղերսագիրը համեստ բողոք մը կը պարունակէր Փրանսայի տէրութեան արտաքին քաղաքաւորութեան դէմ : Ուսանողք, միագունգ ժողովուրդ և վարժատուններու դրօշը առնելով, սկսան պուլվարներու վրայէն դէպ ի աղգային ժողովը ուղղիլ : Իրենց նպատակը ոչ ապստամբիլ էր և ոչ կռուիլ, և մէջերնէն մէկը փոքր դէնք մ'անգամ չ'ունէր : Կրօնական կողմը այս բողոքի շարժումը զրպարտելով և աղգային զօրքը անկէ խաբուելով, սկսաւ ուսանողներու դէմ դնել և պղտի ընդդիմութիւնէ մը ետեւ ցրուեց դանոնք : Աղերսագիր տանող բազմութեան զրօշակիրը մեր բարեկամներէ մէկն էր, և որովհետեւ իրենք քով կը գտնուէինք, վայրկեան մը զրօշը մեր ձեռք անցաւ շփոթին մէջ և կարող եղանք զայն պաշտպանելու իբրեւ ուսանող և ոչ իբրեւ մարտիկ ապստամբ : Այսպիսի թեթեւ արիւնքիւն մը հաղիւ թէ յիշելու արժանի է և Թորոսի մը բերնի մէջ միայն ապստամբութեան և խռովութեան ձև կ'առնու : Լուի Ֆիլիպին և յաջորդ

տէրութեան ժամանակը այսպիսի բողոքներ ընել աւանդութիւն և զրեթէ սովորութիւն էր ուսանողներու մէջ : « Խաժամուժ ամբոխ » անուանել զստոնք, որք ամենքը պատաւոր ընտանիքի զաւակ են, « Կատաղի խռովարար » վերադիրով նախատել, Շանկարնիէ զօրապետը ասպարէզ բերել և ուրիշ անհիմն պարագայներ հնարել, ժեղութիւններու բարեկամի մը զրուծիւն է և չենք զարմանար որ Պարոն Թորոսն ալ անոնց հետեւի : Պ. Գ. Այվազովսքիին պաշտպան մը ասկէ աւելին ընելու սովոր է անորմէ... :

Տաս տարի անցան այս փոքր դէպքին վրայ և դեռ այսօր զգում մը չենք զգար մեր ըրածէն : Ուր և զգտնուինք ազատութեան հետ պիտի մնանք և բռնութիւնը չ'պիտի սիրենք երբեք թէ Հայերուն և թէ օտարներուն մէջ : Մեզի համար ազատութիւնէն զօրս լուսաւորութիւն չ'կայ : Թոյ Պարոն Թորոսը ամեն օր վատութիւնէ վատութիւն զլորի և շաքածը անգամ մը խոստովանի Պ. Գ. Այվազովսքիին ու մեղայն ըսէ : Մենք այսպիսի բարոյական մը կը մերժենք, և եթէ այս մեր յանցանքի կը խոստովանինք, մեղայն չ'ենք ըսեր մեկու մ'առջև : Մեղայն ըսելու սովորութիւն չ'ունինք, վասն զի ազատութիւնը ուրանալու փախազ մը չ'ենք զգար... : ԶԻդալիա կը սիրէինք, միշտ սիրեք ենք. Իդալիա իր արիւնաթաթաւ ճակտով միշտ երեւած է մեզ իբրեւ կենդանի պատկեր նկուն ազգերու : Այս սէրը և ազատութեան աւելնը զմեզ թշուառութեան մէջ զլորեցին : Նոյն այս թշուառութիւնը նախատինք է, հայտ մը բերնէ չ'պիտի վիժէր այն և մեր անունը ազտութէր, վասն զի Հայաստանի աւերայրեաց վիճակը իր զաւակներու վրայ պարտք կը դնէ թշուառ ժողովուրդներու կարեկցիլ : Նկուն ազգերը միւս ազգերու համակրութեամբ միայն կրնան վերականգնիլ : Ո՛վ զիտէ գուցէ օր մը Իդալիաի զաւակ մը մեր գերութեան և թշուառութեան դէմ բողոքէ ինչպէս մենք իրեն համար բողոքելու զօրութիւնը ունեցանք... : Նոյն մեր ըրածը նախատինք է, այս մեր վրայ կ'ընայ միայն, և մէկը գանգալու իրաւունք չ'ունի, վասն զի, մեղմէ դատ, ուրիշի մը վնաս չ'տուինք..... :

Տաս տարի անցան և նոյն այն զրօշը, զոր վայրկեան մը կրելու պատիւ ունեցանք, Նաբօլէօն Գի և Վիկթօր Էմմանուէլ Բի ձեռքը կը գտնուի և յաղթանակաւ կը փառաւորուի պատուոյ գաշտին վրայ : Իդալիաի համար հնչուած տիեզերական համակրութիւնը մեր արդարացումն է... :

Տաս տարի անցան և հիմա Իդալիա ոչ միայն կը զարթնու, կը կանգնի, ոգի կ'առնու և կը կաղապարուի, այլ և Հռոմայի մէկ մասը այնպիսի նորոգումներու և օրէնքներու սերմը կ'ընդունի որ շատ չ'երթար բարօրութիւն և ազատութիւն պիտի բերէ իրեն :

Տաս տարի անցան և Հայերը փոխանակ ուրիշ ազ-

բաժանել պատրաստելու համար. նախատինքն է օտարին լեզուն և գիտութիւնը այն աստիճան մշակել որ անկէ հայ զայ մեզ և զուցէ օր մը դուրնաբեայ փառք մը. մեզ նախատինքն է մեր անցեալը՝ ուր ծաղիկ հասակներս խամրեցաւ, բայց ուր վատութիւնը շուրջ մը չկրցաւ թողուլ : Այսպէս ուրեմն ամօթ է մեզ Հոռմայի բռնապետ իշխանութեան դէմ բողոքելը և այս պատճառաւ յիշտուն օր բանաւ մնալը. այսպէս ուրեմն լուսաւորչական ըստած Հայեր մեզ ամօթ կը սեպեն Բաբին դէմ հեղոյներուն հետ օր մը միաբանելը... : Նախատինքն և ամօթ է մեզ Իգալիտի վրայ համակրութիւն զգալը, ՏՅ անմեղութեան սկզբունքը ընդունելը, մարդկային վեհ տեսիլներու սիրահարելը, ազգութիւններու իրաւունքը զսկիւր և կրօնամոլութեան կուսքը սրանալը հոգւով և սրտով : Այն, նախատինքն է և ամօթ. հայ Թորոս մը կ'ըսէ զայս և իր սեղանաբարութիւնը կ'ընդունուի Պօլսի մէջ մոլեգին ծախսարարութեամբ... :

Սակայն « հայ անուանը նախատինքն և ամօթ բերող » էրիտասարդը այն ուսումնականն է որու Երզրումի հիւպատոսը կը դիմէր քանի մը տարի առաջ և կ'աղերսէր որ զիջանի իրեն հետ աշխատիլ և Հայաստանի վրայ տեղեկութիւն տալ Բրիտանի պատերազմին առեւ. սակայն նոյն էրիտասարդն է որ ի սէր ազգին ամիս մը իր բոլոր գործերը թող տալով հիւպատոսին և իր ստեղծագործութիւն հետ աշխատեցաւ. սակայն նոյն էրիտասարդն է որ Ֆրանսայի Էրեւելի պաշտօնատրէ մը ընտրեցաւ իր ընդունեցաւ յիշատակագրի մը պատրաստութեան համար. սակայն նոյն էրիտասարդն է որ յոյն Տէրութեան արտաքին գործերու պաշտօնակալին Էրկու ազգականները կը յանձնուին որպէս զի Ֆրանսայի գալութիւնը և լեզուն սովորեցնէ անոնց . Պատանի թու մը կը զիջանի Մեսրոպի թուին լուսաւորութիւն և փրկիստօյնութիւն ընդունիլ. սակայն նոյն էրիտասարդն է որ Բարիզ գտնուող հայերուն մեծագոյն մասին աղէկութիւն ըրած է... : Սակայն... : Ամօթով ենք և ասկէ աւելին չենք ուզեր զրելու որպէս զի մեր « նախատինքն » չ'աւելնայ . Ո՛հ ԼՅԷՊ. Կ. Շահնազարեանի մը բարբը ունենայինք և ԼՅԷՊ. Գ. Այվազովսքիի մը վարքով շարժէինք, ԼՅԷՊ. վատութիւնը շոյել զիտնայինք և բռնութեան ձեռքը համբուրելու խոնարհէինք, ԼՅԷՊ. Թորոսի մը ազգին ստակը յափշտակելը և ուտելը ազգասիրութեան օրինակ ընելով քարոզէինք և ԼՅԷՊ. զեսպաններու լրտեսութիւն ընէինք Պէյօղլուի մէջ... փառք և օրհնութիւն, զովեստ և պարգև մեր վրայ պիտի հոսէին Պօլսի տեսակ մը հայերէն... : Այս փառքը և օրհնութիւնը կը մերժենք իրարոյս սրտէ և կը շարունակենք զրաբարութեան ընդունելը :

Ի. ՄՏՈՒԹԻՒՆ . Պարոն Թորոսը մեր պատանեկան յիշատակը արատելէն և քաղաքական կարծիքները հիմնովին խանգարելէն հոբը, կը յանգզի մեր զրա-

գէտի անգընը և պատիւը պղծել ու քսել « Արեւելք հանդէսը կամաւ դադարեցուց այս կամ այն անձը պատճառ բռնելով » : Պարոն Թորոսը կը բանադադուէ : Արեւելք խափանութեամբ յօդուածի մը համար որ Պ. Գ. Այվազովսքիին և Տատեան Պօղոս աղային դէմ գրուած էր = Անթիւ վկայներէն մէկը, Պարոն Թորոսի պատան, զեռ կենդանի է և ուզող կրնայ իրեն հարցընել թէ՛ սրու բերնէն մեր յօդուածին չտպուելու սրտումը բերաւ մեզ : Կը հաստատենք բոլոր ազգին առջև որ Պ. Գ. Այվազովսքիին իր քենգութեամբ, Պ. Յ. Կոնիկեանը այս նիւթի վրայ մեզ զրկած նամակովը և տպագիրը իր որոշումովը ոչ միայն Արեւելքին խափանութեամբ պատճառ եղան այլ և մեզ նիւթական, բարոյական և մտական վնաս տուին... : Գ. Այվազովսքի պարոնը ասկէ աւելին ըրաւ, և քսան օրէն ետեւ մեր սենեակը գալով չամշցաւ զմեզ բերնով ևս խարելու աշխատիլ Էրկու Էրիտասարդի առջև : Նոյն օրը, մէկ ժամ առաջ, այս էրիտասարդներէն մէկն ալ խաբէց, որ իր բարեմտութեամբ հաւտացեալ առաջնորդ եղաւ իրեն, բայց որ հոբը անգութիւնը հասկնալով մեզմէ ներսում խնդրեց... : Պ. Գ. Այվազովսքիին նպատակը կրկին էր. Ժամանակ շահիլ իր ուրացութիւնը պատրաստելու համար և մեր բերանը խփիլ որ իր դարանները տպագրութեամբ չ'յայտնուին : Այս անտրանայի է, և Պ. Ամբրոսիոսին Պօլսի մէջ ըրածով կը կատարելագործուի : Պարոն Ամբրոսիոս կրօնաւորը, որ մեզ անձամբ է զխոսիլ, Օսմանեան մայրաքաղաքը հասնելէն ետեւ, կ'Էրծայ Արեւելքին գործակալը կը գտնէ, ասոր մէջ տպուելիք Ձեռնագիր յօդուածի մը էութիւնը կը յայտնէ, կը քարոզէ, կը համոզէ և շատ չ'երծար իրեն կը միտէ դանդիկ : Երկուքն ալ խօսք կուտան, խօսք կ'առնուն որ ԼՅԷՊ. Արեւելք ուրիշ տեղ մը տպուի և իր մեղաւոր յօդուածով Պօլսի զրկուի, ծրարները սուրհանդակէն առնուին և այնթիւր պահէն, հրատարակէն : Պարոն Ամբրոսիոսը բանը այսպէս կ'աւելնէ հոբը Բարեղ կը գրէ Պ. Գ. Այվազովսքիին « չ'առնէլ պատասխանի յօդուածոյ Ոսկանեանի » և բոլորովին անհոգ ըլլալ այս կողմէն : Ահա Բրիտանիա աշակերտ կրօնաւորներու ըրածը . Մամուլի տարեգիրներու մէջ այսպիսի անիրաւութիւն մը չ'յիշուի և քսանի մը հայ սեւազրոյսներու արուած է կղեր զայն արձանագրել հոն, և բռնութեան յիշատակները աւելցընել : Պ. Ամբրոսիոս անուն կրօնաւորին բարեւ անգամ տուած մարդ չ'ենք և յանուն արդարութեան կը հարցընենք չորս միլիօն Հայերու թէ ինչ իրաւունքով մեր գործերու կը խառնուի և անհուն վնաս կը պատճառէ մեզ : Կրօնք պիտի փոխէ, կ'առնուի և անհոգ զրկուի մեր զրոյսէն : Կրօնք պիտի փոխէ, միթէ Լիւիզիցոյ մը բանալին մեր ձեռքն է, միթէ ուրացողութիւնը և կրօնքի առուաւորը ազնաւ հանգէսի մը հետ յարաբերութիւն մ'ունին որ պատ-

ընթերցողը կրնայ զիրար նշմարել հրատարակչին տղիտուծիւնը և հետեւապէս իմանալ թէ ինչու պատասխանատու չուղեցինք ըլլալ : Եւ որովհետեւ Իզմիրէն Պօլիսի վրայ հսկել կարելի չ'էր, ստիպուեցանք մեր խոստումը հետ առնուլ և մեր զրազէտի պատիւը ազատել անոր ձեռքէ : Կը հաստատենք նաև որ չորս կամ հինգ տետրի թարգմանութեան արժէքէն աւելի ստակ մը չ'անցաւ մեր վրայ, և այս թարգմանութեան առջի մասը չ'ունի այն դրոշմը զոր ջանք ըրինք դնել հոն մեր հայերէնով : Լուսնայափողի Թորոսի մը դատաստանին ներքեւ չ'լինար այսպիսի գրական խնդիր մը, և այս անգամ իր ստուծիւնը և զրպարտութիւնը մոխի պէս կը ցնդին, վասն զի Պօլսեցիք լաւ կը ճանչնան հրատարակիչը :

Ի՞նչ. ՍՏՈՒԹԻՒՆ : Պարոն Թորոսին կատաղութիւնը այնքան է որ զրպարտելու կամ ստելու առիթ մը գտնելու համար նաև ուրիշի մը գրուածը մեզ կ'ընծայէ ու կը մոնչէ : Դիւրին ճամբայ հասարակութիւնը մոլորելու, որ դժբախտութեամբ, ամեն տեղ և ամեն ազգի մէջ քննելու մեծ վախճալ չ'ունի և բերնի թախմախութեամբ կ'առնու, կը տարածէ կուրօրէն... : Մօսկուա տպած Հիւսիսայինայ հանդէսէն քաղելով՝ Պարոն Ղալիպեանին նենգութիւնները յիշեր և դատապարտեր էինք : Այս նենգութիւնները նաև ոռա ատենին առջև խստիւ մեղադրուելէ և : Պարոն Թորոսը համարձակիր Հիւսիսայինային գրածը հերքել, Խրեմի հայ բաղմութեան բողոքը և դատը յիշել ու կ'սկսի մեզի դէմ ոռնալ, ստել և մեր անունը զրպարտել : Ի՞նչ ըսենք, այս ալ ժողովրդութեան հնարք մ'է և կատարեալ այլապաշխարհ մը կը յայտնէ :

Ի՞նչ. ՍՏՈՒԹԻՒՆ : Վերջապէս Պարոն Թորոսը կը հրատարակէ թէ՛ « ազգին և աշխարհի մէջ Երեւելի (քնն) » անանկ հայեր կը ճանչնայ որք մեզ զրամի օգնութիւն ըրեր են : Բայց հոս ալ Պարոն Թորոսը իր ժանտ լեզուին ներքեւ կը պահէ անոնց անունը : Ի՞նչ ապաւէն երեւելի Հայերու համար որք, կարծենք, շատ ուրախ չ'են այսպիսի լեզուի մը ծայրը գտնուիլ : Կը հաստատենք որ այս տեսակ « Երեւելի հայեր » չենք ճանչնար և մեր մանկութիւնէ ի վեր կ'աշխատինք անկախութեամբ ապրիլ : Դէպքերուն բռնութիւնը մէկ քանի ազգայիններու քով տարաւ զմեզ աւանայ, բայց իրենց սնափառութիւնը այնպիսի տխուր ազդում ըրաւ մեր վրայ որ զիրենք թողտուինք անգառնալի կերպով : Ազատութիւն խնդրելու և իրաւունք մը պաշտպանելու համար մօտեցանք իրենց և ոչ օգնութիւն ուղիւ զիտաւորութիւնով : Ի դուր կը բնառենք մեր միտքին մէջ թէ ո՞վ կրնան ըլլալ այս « Երեւելի Հայեր » որք Թորոսի մը հետ բարեկամութիւն ունին... և հրատարակաւ կ'ըսենք : Մէկ տուող թող զայ Երկուք առնու : Ականջնին բաւական մեծ է և կը յուսանք որ մեր հրաւերը կը

լսեն ուկուգան մեղմէ քանի մը ոսկիի ծանրութիւնը կը վերցընեն :

Պարոն Թորոսը լրբութիւնը ձեռք կ'առնու այս աստիճան տանելով զրպարտութիւնը և կը հարկադրուինք, մեր պատույ համար, իրեն չ'հետեւիլ և իր յօդուածին միւս ստուծիւնները և անհեթեթ բաները չ'յիշել : Քանի մը էջերու մէջ քսան և չորս զրպարտութիւն և ստուծիւն զիջողը, զիտէ ամեն տառերը մէյմէկ վատութիւն ընել և հասարակութեան առջև դնել : Ասոր կը վերաբերի դատը կտրել հիմայ :

Ահա այսպիսի յատկութիւններով զարդարուած էակ մ'է Պարոն Թորոսը որ կ'ուղէ մեր պատիւը արատել օրագիրներու մէջ : Եթէ զինքը մէկ անգամ տեսած չ'ըլլայինք, կարելի է որ սոսկայինք իր ըսածներէն, բայց Թորոսի մը բերնէն ելածը մեր վրայէն կը սահի, ինչպէս կամիլ մը իւղ կ'իւնի վրայէն, առանց հետք մը ձգելու... : Բաւական է որ թօթափուինք, մեր ոտքերու ներքեւ առնելու համար Եւստուծիւնը և զրպարտութիւնը որք Խթութիւն գոհակիներու պարագլխի մը լեզուէն դուրս թափեցան : Իր սիրտը անհուն հանք մ'է այս տեսակ վատութիւններու և յօդուածիւն երկարութիւնը չ'ներեր որ զանոնք ամենը այսօր յայտնենք բարեմիտ ազգայիններու : Վատութեան քօղը հազար ծալք ունի և միանգամայն զինք մերկանգամ խայտառակել զիրին չ'է ուրիշ անգամի կը պահենք ուրեմն մեր իրաւունքը իր անցեալը յիշելու և դատելու : Պարոն Թորոսը կը կարծէր թէ զմեզ վատահամբաւելով ինքը պիտի սրբուի : պիտի տեսնէ որ իր այս լրբութիւնը նոր « խայտառակութիւն » մը ևս կուտայ իրեն և իր անունը կը փորագրէ Վատակի մը անունին քով : « Եւ այն որ կամէր թագաւոր լինել Հայոց աշխարհին, կ'ըսէ Եղիշէ, իբրեւ զշուն մեռաւ... » և մենք կ'ըսենք. « Եւ այն որ կամէր ազգապէս լինել Պօլիս, իբրեւ Պաղիլ խայտառակեցաւ և իբրեւ ստախօս անկաւ ի գոհն : »

Ս. ՈՍԿԱՆԵԱՆ՝

Համարատու Տըլէզր.

Ի ԲԱՐԻՉ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte 44.